

16 սեպտեմբերի, 2019թ.

**HSBC Հայաստանը ներկայացնում է «Մեծ ընտանիք» առաջարկը, որի շրջանակում կիջեցվեն առաջարկի պայմաններին բավարարող անձանց գործող անշարժ գույքի ձեռքբերման վարկերի տոկոսադրույքները**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (HSBC Հայաստան) ս.թ. սեպտեմբերի 14-ին իր հաճախորդների և իրենց երեխաների հետ միասին նշեցին «Մեծ ընտանիք» առաջարկի մեկնարկը՝ Վազգեն Մարգսյան 9 հասցեում գտնվող HSBC Հայաստանի «Հանրապետության Հրապարակ» մասնաճյուղում:

Միջոցառմանը մասնակցեց թվով մոտ 100 այցելու: Բացման խոսքով հանդես եկավ HSBC Հայաստանի Գլխավոր գործադիր տնօրեն՝ Փոլ Էդգարը, որը մասնավորապես նշեց. «Հանդիսանալով աշխարհում և Հայաստանում առաջատար բանկերից մեկը՝ մեր գործունեության հիմքում դնում ենք հաճախորդների հետ հարաբերությունները: Տարիների ընթացքում մենք զարգացնում ենք այդ հարաբերությունները՝ ձևավորելով վստահության և հարգանքի մթնոլորտ մեր և մեր հաճախորդների միջև: Մենք նրանց կողքին ենք լավ և վատ օրերին և պատրաստ ենք աջակցել նրանց՝ կյանքի կարևոր որոշումներ կայացնելիս՝ լինի դա գույք գնելու, ընտանիք կազմելու, թե այն համալրելու որոշում»:

Այնուհետև ելույթի խոսքով հանդես եկավ Բանկային մանրածախ ծառայությունների դեպարտամենտի տնօրեն՝ Միհրան Մուրադյանը, որը ներկայացրեց «Մեծ ընտանիք» առաջարկի մանրամասները և ասաց. «HSBC Հայաստանը մշակել է այս առաջարկը՝ հավատարիմ մնալով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իր սկզբունքներին և նպատակ ունենալով կառուցել երկարաժամկետ և ամուր համագործակցություն, որի առանցքը հանդիսանում է հաճախորդը: Մենք մշտապես ձգտում ենք հարմարեցնել մեր կողմից առաջարկվող պրոդուկտներն ու ծառայությունները հաճախորդների կարիքներին, և այս առաջարկը այդ մոտեցման օրինակներից մեկն է»:

Տեղեկանալով, որ մասնակիցների շրջանում կան մոտ ապագայում ընտանիքի համալրում սպասող հաճախորդներ՝ պարոն Մուրադյանը հանդես եկավ անակնկալ հայտարարությամբ, ըստ որի առաջարկի մեկնարկի առիթով տոկոսադրույքի նվազեցումը նշված հաճախորդների համար կկիրառվի առաջարկի առաջին իսկ օրվանից՝ սեպտեմբերի 16-ից:

Պաշտոնական մասի ավարտից հետո միջոցառումը շարունակվեց երեխաների համար նախատեսված մի շարք զվարճալի և ուսուցողական խաղերով, այն է՝ նկարչություն, հանդիպում սիրելի մուլտիերոսների հետ, քիմիական շոու, կախարդական տնակի ֆոնին լուսանկարում և բազմաթիվ այլ անակնկալներ:

## **Առաջարկի մասին**

«Մեծ ընտանիք» առաջարկից օգտվելու համար HSBC Հայաստանում անշարժ գույքի ձեռքբերման վարկ ունեցող հաճախորդը պետք է ներկայացնի 2019թ. սեպտեմբերի 16-ից հետո ծնված/որդեգրված երեխայի/ների ծննդյան/որդեգրման վկայականը, լրացնի համապատասխան դիմումը, որի ուժի մեջ մտնելուց հետո մարումները կիրականացվեն անշարժ գույքի ձեռքբերման վարկի արդեն իսկ իջեցված տոկոսադրույքով: Յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան/որդեգրման առիթով տոկոսադրույքը կնվազի ևս 0.25%-ով՝ առավելագույնը 0.75%՝ 3 երեխայի հաշվարկով: Առաջարկի շրջանակում կատարված տոկոսադրույքի իջեցումն ուժի մեջ կլինի անշարժ գույքի ձեռքբերման վարկի գործողության ողջ ընթացքում:

### **HSBC Խումբ**

*HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 65 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2019թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,751 միլիարդ ԱՄՆ դոլար:*

### **HSBC Հայաստան**

*«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 392 աշխատակիցների միջոցով: 2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 268 միլիարդ ՀՀ դրամ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲ-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը:*

- Վերջ/վերջ-